ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 դեկտեմբերի 2019 թվականի N 1830-Լ

Փոփոխվել է ՀՀ կառավարության 24.12.2020թ. N 2140-Լ որոշմամբ, տե՛ս հետևյալ հղումով

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 2020-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2020-2024 թվականների զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին՝

1) մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը վերանայել գործող ռազմավարական ծրագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել նոր հնգամյա ռազմավարական ծրագիրը՝ առաջիկա հինգ տարիների համար.

2) սկսած 2021 թվականից՝ մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 15-ը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել նախորդ տարվա ռազմավարական ծրագրի առաջընթացի հաշվետվությունը:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** **Ն. Փաշինյան**

2019 թ. դեկտեմբերի 16
Երևան